

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր Ի Ն

Կոմիտաս Վարդապետը (1869-1935) այս բացիկներն ու նամակները գրել է Բեռլինից 1897-1899 թթ., իր երաժշտական ուսումնառության ժամանակ, հասցեագրելով Վիեննայի Մխիթարեան Միաբանության վանք՝ «Հանդէս Ամսօրեայ»ին, ՀՀ. Գաբրիէլ Մեհնգիւստերին եւ Վարդան Մելիսեդեկեանին, խօսելով մանաւանդ հայկական եկեղեցական երաժշտության մասին: Ինքնագրերը, հանելի եւ դիւրընթեռնելի ձեռագրով գրուած, պահուում են վանքի դիւանասանդը: Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Միաբանության Աբբաճայր Գեր. Գր. Մանեանին եւ Դիւանապետ Հ. Օգ. Սեփուլեանին՝ հրաձգականութեան իրենց սիրայաժար քոյրուհիներն համար: Հրաձգական ենք առանց որեւէ փոփոխութեան կամ կրճատման. եղանակի ծանօթութիւնները մերն են: Պահպանել ենք ժամանակագրական կարգը:

ՄԱՐՏԻՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ժրնեւի Համալսարան

1. — «ԱՆՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-ին

[14. 1. 1897, Բերլին]¹

«Հանդէս Ամսօրեայ»ի Տպարանական Խորհրդին.

Խոնարհաբար խնդրում եմ, եթէ կարելի է, պատուական հանդիսիդ 1896 Դեկտեմբեր, ապա շարունակաբար թուականից բոլոր, եւ 1895ից ցարդ, բացի 95 Մարտ, Ապրիլ համարներից առաքել, որոց մէջ Հայոց հին երաժշտութեան մասին յօդուած կայ տպուած:

Բաժանորդագինն եւս գրելու է, կենսադրամա ստանալու պէս՝ ամէնից ուշ Փետրուարի 15ին միանուագ կվճարեմ:

Խ. Մ.² Կոմիտաս վարդապետ.(18)97/14/Ա.³

Բերլին.

Հասցէս.

Archimandrit Komitas.

Berlin. S. W.

Koch Str. 73. bei Strauss.

¹ Թուականը եւ վայրը նշուած են երկուսի վերջում:² Խ. Մ. տառերը հաւանաբար նշանակում են (խոնարհ ծառայ):³ Կոմիտաս վարդապետը սովորաբար հայերէն գլխագիր տառերով է նշել ամիսները կամ նրանց հերթականութիւնը: — Հանդէսի խմբագրութեանն ուղղուած մի նամակ տե՛ս ստորեւ:

2. — ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԱԳԵՏԻՆ

28 Յուլիս [1897]¹. Բերլին.

Բարձրապատիվ Լալր Մատենադարանապետ.

Խոնարհաբար խնդրում եմ, եթե կարելի է, Մատենադարանիդ մէջ գտնուած Գրիգոր Դապասախալեանի² «Գիրք երաժշտական», «Նուագարան երաժշտական» եւ «Գրքոյկս Կոչնցեալ երգարան» տպագրուած գրքերը մի ամիս ժամանակով ինձ ուղարկելու հրաման ստանալիք, որով չափազանց երախտապարտ կմնամ Ձեր առաջ:

Մէկ ամիս յետոյ ապահովեալ կկերպարմանմ Ձեզ:

Հասցէս.

Archimandrit Komitas. Berlin S. W. Koch Str. 73. b. Strauss.

Մնամ յարգանքոք

Խ. Կոմիտաս վարդապետ.

¹ Տարեթիւը եղբակցնում ենք երկտողի սկզբում (հաւանաբար) մատենադարանապետի «Գրքի 29/VII 97» նշումից:

² Գրիգոր Դապասաքալեան (1740–1808), բանաստեղծ, երաժիշտ, խաղաղէտ, դպիր: Նշանդէս Ամսօրեայի խմբագրութեանն ուղղած նամակում Կոմիտաս վարդապետը աղգանսւան մէջ գործածել է թ (փոխանակ այստեղի խի), որ իսկականն է: Նշուած երեք գործերը լոյս են տեսել 1803 թ.: Նրա շնորհիւ Մատենադարանի հանդէսի թ. 11-ում, իսկ «Գրքոյկ»-ը Կոչնցեալ երգարանի³ 1794 թ.: Նրա մի ուրիշ գործը ձեռագիր վիճակում կրել է Կեոտաբայի Ս. Դաւիթ վանքի 85 ձեռագրերի հետ առաջին համալսարանային պատերազմի ընթացքում:

3. — Լ. ԳԱՐՐԻԷԼ ՄԷՆԷՎԻՇԵԱՆԻՆ

12/Բ. [1898]¹. Բերլին.

Արժանապատիվ Լ. Գարրիէլ վ. Մէնէվիշեան,

Այսօր նամակ ստացայ Պ. Մակար Եկմալեանից², որ տարակուսելով հարցնում է. «Արդեօք Միխիթարեան Լ. Միարանութեան համար ուղարկած Պատարագի արարողութիւնն ստացուե՞լ է». նա ուղարկած է իր ներդաշնակած Պատարագի արարողութիւնից մի օրինակ Բազմազան Միարանութեանդ, բայց տեղեկութիւն չունի: Եթէ ստացուած է, մի երկտողով միամտացնել կխնդրուի. եթէ ոչ՝ նոյնպէս: Գիրքն ուղարկած է պ. երաժիշտը մի ուսանողի ձեռքով:

Յարգանաց ողջոյնով՝

Խ.⁴ Կոմիտաս վարդապետ Գէորգեան.

¹ Տարեթիւը եղբակցնում ենք հասցէատիրոջ, Ընկ[ալայ] 98 14/II, նշումից եւ, մասնաւոր, բացիկի փոստային կնիքից:

² Լ. Գարրիէլ Մէնէվիշեան (1864–1936), Վիեննայի Միխիթարեան Միարանութեան հանապուցաւ անդամ, լեզուաբան եւ բանասէր, բաղմաթիւ յօդուածներ եւ գրախօսութիւններ է հրատարակել Նշանդէս Ամսօրեայում:

³ Մակար Եկմալեան (1856–1905), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ. 1895-ին Թիֆլիսում նրա մօտ երաժշտութեան տեսութիւն է սովորել Կոմիտաս վարդապետը: Հանրայայտ է նրա «Պատարագ»ը:

⁴ Խ. Ն. Կրիտ կարգացուի խոնարհ կամ խոնարհաբար:

4.

[18]98.16.Գ. Բերլին.

Արժանապատիւ Հ. Գարրիէլ Մէնէվիշեան,

Յարգոյ Բարեկամ,

Վաղուց եմ ստացել Ձեր առաքած յօդուածը. դժբախտաբար, երկրորդ օրն արդէն ինձ բռնեց մի սաստիկ ջերմ, որ երեք օր առաջ միայն բարեհաճեցաւ իւր այցելութիւնից վերադառնալու. երէկ բաւական առողջ զգալով թարգմանեցի յօդուածիս կէսը¹, որն եւ առաքում եմ նամակիս հետ, գուցէ շարելու պատրաստութիւն տեսնէք, իսկ մնացեալ կէսն էլ մի քանի օրից կ'ուղարկեմ յուսով, եթէ առողջութիւնն շարունակէ. օտարութիւնն էլ մի բան չէ, Արժանապատիւ բարեկամ:

Թարգմանութեան վրացերէն եւ ասորերէն կտորների տեղերը բաց թողի, վասն զի ես չգիտեմ այդ լեզուները:

Յարգանք Ձերդ

Խ. Մ. Կոմիտաս Վարդապետ Գէորգեան.

¹ Ինչպէս երեւում է յաջորդ նամակից, Կոմիտաս վարդապետը ռուսերէնից հայերէն է թարգմանել հայագէտ Նիկողայոս Մառի մի յօդուած Հ. Գարրիէլ Մէնէվիշեանի խնդրանքով, սակայն չհասցէ՝ Ամստըրտըմ Մառի յօդուած լայն չի տեսել Կոմիտաս վարդապետի թարգմանութեամբ, ուրիշների թարգմանութեամբ՝ այո:

5.

98.18.Գ. Բերլին.

Արժանապատիւ Հայր Գարրիէլ¹,

Յարգոյ բարեկամ,

Այսօր վերջացրի թարգմանութիւնը. թղթեակիս հետ միատեղ առաքելու եմ: Նախընթաց նամակումս յայտնելու մոռացել էի, թէ Հ. Գալուստ Տէր Մկրտչեանի² խօսքերը, որ թարգմանաբար առաջ էր բերել Ն. Մառը, աւելի լաւ կ'իլնէր նոյն իսկ Արարատից³ արտագրուէր. թէեւ դա էլ թարգմանեցի, որպէս Մառն էր ռուսերէնի փոխադրել:

Գէտք է ասեմ, որ պ. Մառի⁴ լեզուն ո՛չ միայն ծանր, այլ եւ բուն, մաքուր ռուսերէն չէ՝, ուստի շատ մթութիւններ կային. ուստի ինչ ինչ մանր թերութիւններ եթէ պատահեն, ներող կ'լինիք:

Յարգանք Ձեր բարեկամ

Խ. Մ. Կոմիտաս վարդապետ

¹ Հ. Գարրիէլ Մէնէվիշեան:

² Գալուստ Տէր Մկրտչեան (1880-1918), հոգեւորական: Նա Հայր Մկրտչի չէր:

³ Արարատ, Էջմիածնի Մայր Աթոռի պաշտօնական ամսագիր (1888-1919):

⁴ Նիկողայոս Մառ (1864-1934), աբխազագէտ, հայագէտ, լեզուաբան, հայրը՝ Նսում-Գոթի, մայրը՝ վրացուհի:

6.

1898. 6/6. Բերլին.

Արժանապատի՛ւ Հ. Գարրիէլ Վ. Մէնէվիշեան],

Սիրելի՛ Բարեկամ,

Նոր էի վերադարձել Դրէզդէնից, ուր Հայ օրիորդ էր վախճանած. նորա թաղման ծիսակատարութեան համար այնտեղ էի գնացել, երբ ստացայ Ձեր Սիրելութեան գիրը՝ ի պատասխան իմ գրութեանս:

Սիրելի՛ Հայր, ես բոլորովի՛ն համամիտ եմ Ձեր կարծիքին՝ Հ. Տ. Վ. ի գտած դասագրքին տպագրութեան մասին¹. Բայց ցաւելով պէտք է յայտնեմ, որ այդպիսի գանձերու վերայ մարդիկ թուիս են նստում հաւերի պէս, սակայն առանց արդիւնքի. «Ինքեանք ո՛չ մտանն են որք կամին, չթողուն»². այս ցաւալի է, բայց եւ նոյնքան իրականութիւն:

Պ. Մ. Եկմալեանցին գրուածքը դեռ շատ խոշոր պակասութիւններ ունի, բայց դա ընթերցող հասարակութեան մատչելի կացուցանելու համար կարճ կապեցի³: Այո՛, ես եւս պատրաստում եմ, բայց դեռ ուշ պէտք է հրապարակել, վասն զի շատ խոշոր բան է՝ Շարական, Պատարագ եւ Ժամագիրք, զտած եւ մաքրած, եկեղեցական ոճի վերածած, օտարամուտ անհաշակ գեղգեղանքները մկրատած, երաժշտական եւ արեւելեան ոգուն համածայն:

Արժ. Հայր, ես ընիկ Կուտինացի եմ, այստեղ իսկ ծնուած, Սողոմոնեան ընտանիքից. տասն տարեկան Գ.⁴ ձեմարանն եկած եւ այնտեղ աւարտելով վարդապետութիւն ստացած. արդէն 18 տարի է Ռուսաստանում կապրիմ, իրրեւ տանկախօս ստիպուած էի ռուսացից բարբառն ուսումնասիրել եւ գործածել, թէեւ ցարդ տանկապատակ եմ եւ կմնամ:

Ցանկայ Ձեզ քարոզչութիւն Ձեր բարեկամ Խ. Մ.

Կոմիտաս վարդապետ.

¹ Հաւանաբար Պալեան Տ. Վ., «Հայկական Երաժշտութեան Նորագիւտ Դասագիրք» («Հանդէս Ամսօրեայ», 1895, էջ 62 և 1896, էջ 353):

² Յիսուսի մի խօսքն Աւետարանից:

³ Այս գրախօսութիւնը, եթէ հրատարակուել է, մեզ անյայտ է:

⁴ Գէորգեան ձեմարան էլ միածնի վաճառում:

7.

[18]98.28.6. Բերլին.

Արժանապատի՛ւ Հ. Գարրիէլ Վ. Մէնէվիշեան,

Արգո՛յ Բարեկամ,

Նամակիս մէջ ներփակեալ ուղարկում եմ մի փոքրիկ գրութիւն առ խմբագրութիւն Հանդէս Ամսօրեի, եթէ արժան եւ կարեւոր դասուի, խնդրեմ, մի փոքրիկ անկիւն շնորհեցէ՛ք¹:

Աշակերտ ժամանակից ի վեր աշխատում էի մեր նախնաց վեհանուագ դաշնակը վերականգնելուն համար, բայց ձեռքիս տակ կային եւեթ մի քանի այս կամ այն ձեռագրի մէջ սպրդած կցկուտուր ու անկապ նիւթեր, որոնք շատ անգամ իրար բոլորովին

¹ Այդ գրութիւնը լայն չի տեսել հանգէտում, բայց պահպանուել է ավելի եւէ այս նամակից յետոյ:

հակասական պատկեր էին ներկայացնում. մի ամբողջություն կազմակերպող գրություն չկար. 1895ի Հանդէսիդ մէջ Տ. Վ. Պ.ի յայտարարութիւնն ուրախացրեց մեզ բաւականաչափ, գոնէ նոր յոյս արծարծեց մեր մէջ: Թէեւ, թէ՛ Սրժ. Տ. Վ. Պ. թէ՛ Հանդէսիդ խմբագրութիւնը խոստացած էր այս խնդրի մասին խորհրդածութիւններ, սակայն իմ համբերութիւնն կարճելով, մի նամակ գրեցի Սրժ. Տ. Վ. Պ.ին եւ խնդրեցի իմ ծախսեր ձեռագիրն ընդօրինակել տայ եւ ինձ ուղարկել. բայց բացասական պատասխան ստացայ. գրում էր, թէ ինքը եպիսկոպոսութեան վկայական ունի, եթէ եպիսկոպոսանալու Ս. Էջմիածին գայ, այն ժամանակ իւր ձեռագիրն էլ հետը կբերէ. սակայն մենք լաւ էինք սերտել մի տանկերէն տուած օէջմէ էջէյլմ եազ կէլր, եօնհա պիթէրոն, ուստի յոյսերս միանգամայն կտրեցինք: Հանդէսիդ մէջն էլ խորհրդածութիւնը չերեւացին: Ուստի այս գրութեամբս խմբագրութեանդ ուղղեցի մի քանի տող, գոնէ մասնաւոր գլուխներից մի փոփոջ կազմելով մաս առ մաս տպել հաճէր Սրժ. Հ. Տ. Վ. Պ.ը, որպէս զի միջոց լինի ուսումնասիրելու²:

Ի՞նչ օգուտ եթէ գանձը թաղուած է մնալու:

Ցանկալով Ձեզ քաջողութիւն

Մնամ Ձեր բարեկամ

Կոմիտաս վարդապետ Գէորգեան³.

² Տե՛ս «Հանդէս Ամօրեայ», 1895, էջ 62-68, 123-124, Պալեան Տ. Վ., «Հայկական եռամբսօսքեան նորագիւտ Գառգիւր մը»:

³ «Էջմ», մի՛ մեռնիր, ա՛մաւ կը գայ, երեքնուկ կը բռնանի»:

⁴ Պալեան Տ. Վ.ն «Հանդէս Ամօրեայ»ում ոչինչ չի հրատարակել նշուած դասագրքից: Ձեռագրեր պահուելիս է եղել Կեսարիայի Ս. Դանիէլ եկեղեցում. կորած:

⁵ Նամակի հասցէատեղը ձախ անկիւնում է նշել է «Ընկալալ» 30/V 98»:

Յ.

[18]98-28.Ե. Բերլին.

Արգոյ խմբագրութիւն¹,

Արժ. Տ. Վ. Պ. Հանդէսիդ միջոցաւ 1895ի Մարտին հրատարակեց մի շատ հետաքրքրական տեղեկութիւն, թէ գտել է Հայոց հին երաժշտութեան դասագիրքը Կեսարիոյ Ս. Դանիէլ վանքում, որի ամբողջ զխակարգութիւնը եւ մի քանի քաղուածներ էր առաջ բերել: Արդ որովհետեւ մեր Ս. Հարց հոգեւոր դաշնակների վերստուգութիւնն ու վերահաստատութիւնը մի շատ կարեւոր խնդիր է իւրաքանչիւրիս համար եւ ցանկալի եկեղեցական երգեցողութեան միօրինակութիւնն սոցիալարակ, ուստի կլընդրէինք Արժանապատիւ քանախոյզ Տ. Վ. Պ.ից եթէ ո՛չ ձեռնարկն ամբողջապէս, գոնէ հետեւեալ գլուխները մաս առ մաս Հանդէսիդ մէջ ի յոյս հանէր (որպէս զի կարող անձինք ուսումնասիրելու նիթ ունենային). Ե. Զ. Ը. Թ. Ժ. ԻԲ. ԻԴ. ԻԵ. ԻԶ. ԻԸ. ԻԹ. Լ. ԽԲ. ԽԴ. ԽԶ. ԽԸ. եւ ԽԶ:

Կեսարացի դպրի Գրիգոր Կապասաբայեանի գրուածքներն ամբողջացնելու համար ցանկաբար մէջ ենք բերում նորա հնագործ աշխատասիրութիւնը, որ նա տպել է տուած 1794 թուին. այս գրքի մի օրինակն էլ մեր ձեռքն անցաւ:

«Գրքոյկ որ կոչի նուագարան: Ըստ խնդրոյ յակնայ զիւղէն ջերասցոց հանգցւմահոտսի փիլիպպոսի որդի Մահոտսի Մինաս մեծահամբաւ Ամիրային: Ի հովուապետուե. միածնայէջ Սրբոյ գահի Տն. Ղուկասու սրգն. կթղկսի ամենից Հայոց: Եւ ի

¹ Խմբագրութիւնը յարմար էի համարել հրատարակել այս կոչը: Տե՛ս վերեւի նամակի ձեռագրութիւնները հայկական երաժշտութեան դասագրքի մասին:

վերադիտողութե. սրց. տնօրինականացն տեղեաց քս.ի, Տեառն Պետրոսի շնորհափայլ Պատրիարքի: Ի Կոստանդնուպոլիս: Տպեալ Հրամանաւ իսկ եւ ակնարկութ. նորին սրզն. պատրիարքի՝ Տն. Ջաքարիայ ազգասէր կարգացեալ ած.արան բարունապետ: Արտահանեցեալ ի Կեսարացի զապասաքաւան Գրիգոր զպրէ: Յամի ներմարդութե. Տեառն 1794: Ի մերոյս ռմիսգ: եւ օգոստոսի 23: Ի Մայր Տպարանո՞:

Բովանդակութիւն: Էջ 3-8 «Ազգարարութիւն ինչ առ քանասէր վերձանօղս»: Էջ 11-157 Կրգիր, իւրաքանչիւրի տակ մի տուն շարական: Էջ 157 յունարէն երգ: Էջ 158-160 «Ցանկ իւրաքանչիւր համարի երգն թէ ո՞րպէս երգի». ցանկը տաճկերէն երգեր է բովանդակում: Էջ 161-254 «Ազգեցութիւնք ինչ երաժշտական»: Էջ 255-286 հայերէն եւ յունարէն երգեր հայերէն հին խազերով ծայնադրած իբր օրինակ: Էջ 287 եկեղեցական խազերի ցանկ: Էջ 288-417 զանազան հայերէն եւ յունարէն երգեր: Էջ 418-420 յունարէն երգ, յոյն խազերով: Էջ 421-428 «Յիշատակարան զբրոյս». Էջ 428-432 «Ցանկ գրքոյս թէ ո՞րպիսի կերպիւ երգեցեալ լինի». այս նախընթաց ցանկի շարունակութիւնն է նոյնպէս տաճկերէն երգերի անուանակոն ցանկ:

Առհասարակ շատ հաճելի կլինէր մի այսպիսի էական խնդրին վերաբերեալ ձեռագիր նիւթերը կամաց կամաց երեւան հանել եւ տպագրել:

Յարգանք՝

Խ. Մ. Կոմիտաս վարդապետ.

Յ.

[18]98.14/2. Բերլին.

Արժանապատիւ եւ սիրելի՛ Բարեկամ,

Խմբագրութեանդ կողմանէ առաքեալ մատենանը խորին շնորհակալութեամբ ընդունեցայ, որպէս եւ Ձեր Հայրութեան թանկագին գրութիւնը: Կամեցայ մի թեթեւակի թղթի, բայց բովանդակութիւնն այնքան գրաւիչ եւ սրտիս մօտիկ էր, որ մինչեւ չիւթոց ցանկը հասայ. այս առթիւ, խնդրում եմ, յայտնեցէ՛ք յարգանքս Սրժ- Հայր Գրիգոր Վ. Գալէմքարեանին՝:

Ուրախութիւնս եւ խնդակցութիւնս օր աւուր աւելանում է տեսնելով Հայ տարրը արեւմտեան զիտութեան աստիճանների բարձունքի վերայ համապայծառ սաւառնելիս:

Միրելի բարեկամ, ես միշտ պատրաստ եմ, որքան ձեռքից կզայ, աշակցելու Ձեր Հայրութեան. խնդրեմ, առաքելու կարգադրութիւնն անէք, որ ազատ ժամերիս Ձեր Թարգմանութեան եւ քնագրի համեմատութիւնն ի գլուխ հանեմ՝:

Միշտ պատրաստ Ձեզ ծառայելու եւ Ձեզ յարգող

Ձերդ Խ. Մ.

Կոմիտաս վարդապետ Գէորգեան.

¹ Լ. Գրիգորի Գալէմքարեան (1862-1917), Վիեննայի Միլիթարեան, բանասէր, բնագետ, մասնագէտ, ժամանակի պատմաբան: Կոմիտաս վարդապետի ստացած գիրքը գուցէ նրա աշխատութիւնն էր:

² Հաւանաբար խոսքը Լ. Մսերեանցի Նայերէն բարբառաբանութիւնն գրուածքի մասին է, որ Թարգմանել է Լ. Գարբիէլ Մենելիլեանը և հրատարակել Նախագէտ Ամսթերդամում (1858, ժԲ, էջ 306-313). նախ տեղեկութիւն է տուել էջ 214-215-ում. յօդուածը եղել է Լ. Մսերեանցի աւարտահաւու. քանի որ բնագիրը ուսուցիչ է, ուստի Կոմիտաս վարդապետը վերանայել է նայերէն Թարգմանութիւնը:

ՆՈՐԻՅ ԵՎԵՂԵՅԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Հայ եկեղեցու առաքելականությունը հարցի շուրջ գրած մեր այս էջերը սուղում ենք փակել Մողաբիա Օրմանեան Պատրիարքի հետեւալ տողերով, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց այժմէական նութիւնը և արտացոլում են պատմական ճշմարտութիւնը. «Բաւական ըլլալ գիտնալ, թէ Հայոց եկեղեցւոյ ուղղակի առաքելական ծագումը ստոյգ և անհրաքելի եղելութիւն մը պէտք է նկատուի եկեղեցական պատմութեան մէջ, յար և նման ուրիշ առաքելական եկեղեցիներու ծագումին, եթէ երբեք այն աւանդական և պատմական աղբիւրները՝ որ այս եղելութիւնը կը հաստատեն, քննադատական

գիտողութեանց կրնան առիթ ընծայել, դիտել կու տանք, որ Հայ եկեղեցւոյ աւանդութեանց գէժ յարուցուելիք քննադատութիւնները աւելի զօրաւոր չեն քան այն քննադատութիւնները, որոնք յարուցուած են այն եկեղեցիներուն ծագումին մասին, որոնք ընդհանրապէս իրրեւ առաքելական ճանչցուած են»¹,

կան սրբութիւններ, որոնք ամբողջ ժողովրդին են պատկանում և նման սրբութիւնները չպէտք է մտքի մարդունը ների և նթարկուեն և ջուրը պղտորելու նպատակ հետապնդեն, որովհետեւ այժմ

¹ Մ. Օրմանեան, «Հայոց եկեղեցին», էջ 21:

10. Հ. ՎԱՐԴԱՆ ՄԵԼԳԻՍԵՂԵԱՆՆԵՐ

24/Դ. [1899]՝. Բերլին.

Մեծարգոյ Հայր,
Վարդան Մելքիսեղէկեան*,
Ուրախութեամբ ստացալ Ձեր պատուական գրութիւնը եւ «Բարբառախօսութիւնը»¹:
Խնդրեմ յայտնեցէ՛ք իմ սիրելի բարեկամին՝ Հայր Գ. Մէնէվիշեանին իմ խորին շնորհակալութիւնս եւ յարգանքօր ողջունեցէ՛ք նորան: Շատ ուրախացուց այդ փառաւոր նուէրը: Ցանկում եմ նորան քաջողջութիւն եւ յաջողութիւն իւր գործոց համար: Պատուական Հայր Վարդան, Ձեզ փորձիկ նեղութիւն պէտք է տամ. «Շարական» բառն ինչպէ՞ս է ստուգաբանած Հայկազեան բառարանը². երկտողիւ յուսամ ստանալ: Նախապէս շնորհակալութիւնս յայտնելով մնամ

Ձեր խ. ծառայ
Կոմիտաս վարդապետ.

¹ Տարեթիւր եղբակացնում ենք հասցէատիրոջ Գրեցի սւգածը՝ Մայիս 10ին 99: Նշումից՝ նամակի սկզբում:

² Հ. Վարդան Մելքիսեղէկեան, Վիեննայի Միաբարեան, ունի յօդուածներ «Հանգէս Ամսօրհայտում»:

³ Լ. Մանեանց, Հայերէն Բարբառախօսութիւն, որ Թարգմանաբար լոյս է տեսել «Հանգէս Ամսօրհայտում», 1899 (ՓԲ), էջ 306 և շար., Թարգմ.՝ Հ. Գարբիէլ Մէնէվիշեան: Կոմիտաս վարդապետը հաւանաբար վերանայել է Թարգմանութիւնը (տե՛ս Նախաղոջ նամակի ծանօթութիւնը). բնագիրը չուսերէն է:

⁴ Նոր Բաղդիբ Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1836-1837, երկհատոր: Շարական լեզուք երբօ յիբ, յիբա, արաբ. յիվիլ, պարսկ. սիւրուս, ռամկ. արգի: Երբ, և երգարան, ընդունաբան ևս կեղեցական երգաց: